

Վերջացնելով Մարտիրոսի հասարակութեան նկարագրութիւնը, պէտք է նկատենք որ Փոռ, Ազատակ, Փաշալու, Սօյլան և Դաշալիի գիւղերի բնակիչները, մասսամբ և Մարտիրոս գիւղի, շփուելով ոռուական տարրի հետ, իւրացըել են և իւրացնում են հետզհետէ նրա սովորութիւնները, վարք ու բարքը և այլն։ Օրինակ, իգական անունները ոռուացնելով, պոչերին կպցնում են «ուշկայ» և «ինկայ» մասնիկները։ — Աննա—Աննուշկայ, Վառվառէ—Վառինկայ և այլն, նոյնպէս էլ արական անունները, — Յովհաննէսին անուանում են Վանս, Գէորգին—Եգոր, Կարապետին—Գերասիմ և այլն։ Խօսակցութեան մէջ գործ են ածում ոռու բառեր, օրինակ. տօ լաճ, «ըսմավարը կիափիտ» էլէ, արաբան «զապրագատ» արինք. քաշեց պաչի մի սնաթ՝ և այլն։ Փողոցներում, ու խնջոյքներում լսւում է նրանց ախորժակով ու ջրալի պատմութիւնը Ռուսաստանի բուֆէտների, ստանցիաների, տրաքտիրների, բարիչնաների, հասարակաց տների մասին և այլն։

Պանդխտութեան մասին գաղափար են տալիս հետեւեալ թուերը.

Միայն 1903 թուին բացակայել են Փոռից 128 հոգի, Փաշալուից 105 հոգի, Մարտիրոսից 142 հ. և Ազատակից 129 հոգի. ընդամենը 504 հոգի։

Վայոց Զորի միւս հասարակութիւնների հետ ծանօթանալը թողնենք ապագային։

Մ. Տ.—Ա.

\*  
\* \*

Ազբիւրի մէջ մի մարալ  
Շուրն է տեսեր եղնիկին  
Ու ման կու գայ միալար  
Մուրիկ-մուրիկ կ եղնիկին։

Էն եղնիկն էլ երազին  
Մարալի ձէնն է առեր  
Ու ման կու գայ մարալին  
Մուրիկ-մուրիկ կ զօր-գիշեր...

Ահ. ԻՍԱՀԱԿԵԱՆ